Մրցույթ՝ «ՀՀ Տավուշի մարզի Ոսկեպարի Հ.Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ» -ի դասվարի, մաթեմատիկայի (21 ժամ), անգլերենի (22 ժամ), ֆիզկուլտուրայի (18 ժամ) և շախմատի (3) ժամ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ հունվարի 17 -ից մինչև հունվարի 30 -ը ներառյալ, ամեն օր ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թ. փետրվարի 1 -ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Տավուշի մարզի Ոսկեպարի Հ.Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Տավուշի մարզ, գ. Ոսկեպար 5/21:

Տեղեկությունների համար զանգահարել (0266)96 215, (098) 69 77 38 հեռախոսահամարներով

ՀՀ Տավուշի մարզի Ոսկեպարի Հախվերդի Բարսեղյանի անվան
միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

ՀՎՀՎ – 07402136
Էլ.հասցե- voskeparidproc@mail.ru

ՀՀ 900398000159Հեռ. /0266/ 96-2-15 /098/ 697738Տնօրեն՝ Հարություն Ալավերդյան